

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIE (مجموعه علوم)

ԽՄԲԱԳՐՊԵՏ

ՏԵՕՐԷՆ

Ղ. ԲԱԼՍ

Վ. Գ. ԶՍԵԳՍՅԱՆ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

1898 ՄԱՅԻՍ 30

Ամեն ճեղի համար Տարեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 15 դահ: Օտար երկրաց համար Տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասք 40 փարայ: Գաւառներէ բօսքի բալ ոչ կ'ընդունուի 100 դրուցի ճեղ 105 դրուց:

ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒԹԻԻՆ

ԲԱՐՈՂ. — Վարագոյրին ետեւէն. — Ալբը փոխած:

Կ. ԹՕԳԱԹԼԵԱՆ. — Ժողովրդական իրաւարանութիւն:

Ղ. ԲՈՂԱՆ. — Այգիներու նոր բիւտանդութիւնը. — Միլտիու:

ՄԵԼԲՈՆ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ. — Անասնաբուժական. — «Տօղունճա» կարկամախո:

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ. — Օղբ եւ միջոցները:

Ղ. ԲՈՂԱՆ — Շերամարութեան թուիւնը. — Բաթիկէտեան դրութիւնով:

ՏԱՆՏԻԿՆԵՐ. — Առանձին տնտեսականը. — Անձեռնոցներու ծալուածք:

— Կտակներու իւզտո՛րիծերը հանելու միջոց:

Թղթականութիւնը:

Զրօսանք. — Հանելուկ թիւ 5:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԻԿՈՂՈՍԻԱՆ

Կ. Պոլիս Զաւահանիար եօզուտու Զիւնայիլի տան թիւ 28

Չափմամբըս քիւ 72, Սեպուն էժ. Ս. Լեւոնափեանի քիւսկիւսի վանառասունը, ուր պիտի գտնուի շատ դիւրամասշնչի գներով ամեն տեսակ ժելի ծոպեր: Հոն է նաեւ կեդրոնն Ս. Սէֆէրեան Էփէնսիի հնարած ժելի ծոպի ոսկիէ, արծաթէ եւ մետաղէ շինուած մեքենաներու: Այս վստահութեան տունը իրեն սկզբունք քրած է, ամեն յանձնարարութիւն ուղղութեամբ, փութով եւ խնամով կատարել:

Դիմեցէ՛ք գոն կը մնաք:

ՏՕՔ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր զինորական եւ քաղաքային հիւանդանոցներու մէջ պաշտօն վարած է, պատիւ ունի ծանուցանել թէ՛ այս անգամ իւր բնակութիւնը հաստատած է Գատը-Գիւղ Պատէմ փողոցս թիւ 12. ուր հիւանդ կ'ընդունուի ամեն օր, ի մասնաւորի աչքի հիւանդութեանց: Իսկ Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկեղեցւոյ դիմաց Չպուքճեան Լեւոն Էփէնսի հանրածանօթ Դեղարանը, եւ հոն իրենց դիմող ա. քատ հիւանդները ձրի կը դարմանէ:

6-10



ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՕՐԷԻՑ

1. ԱՐՓԼԱՆԵԱՆ ՆԻ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. Պոլիս Ֆէսֆեան խանի տակ քիւ 3

Սոյն վաճառատուն պատրաստէ մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամէն տեսակ թարմ գեղօրայք. վերա-

բուժական գործիքներ, Անգլիա կան ե Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեաքներ, գինիներ եւ հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Ասլանեան եւ Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար տուն անձնական փորձառութիւններ ունին: Ամէն ջանք եւ աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն գեղօրայք, ամենայն արագութեամբ, թարմ եւ մաշկելի գներով:

Չարածճի մշուկներու եւ լուերու եւլն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած են ուղղակի ծալմացիայէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք յարգոյ հասարակութեան:

Կարգ մը տեղերէ նամակներ կ'ստանանք, որով մեզ կը հարցնեն թէ՛ հանելուկներ, հարցումներ, խաղեր եւ նրկարհանելուկներ կ'ընդունին՝ հրատարակելու համար:

Արդ կը յայտարարենք թէ՛ պատրաստ ենք հրատարակել եւ նոյն իսկ նուէր ալ տալ առաջին լուծողին, պայմանով որ լուծումներն ալ միասին զրկուին մեզի:

ԴՊՐԱՊԵՏԱՅ ԱԶԳԸ ԼՈՅՍ

Թէ առաւօտեան Սրբազան երգեցողութիւնք եւ թէ ի գէմն Մ. Պատարագի երգեցողութիւնք հրատարակուած են, փոքրիկ դպիրներու համար: Դինը 20 փարա, կը գտնուի Վ. Յ. Մարգարեան գրատունը, Մերձան փողոց թիւ 57:


ՄԼՈՒԿՆԵՐԷ ՄԻ ՉԱՐՉԱՐՈՒԻՔ

Մլուկները որ շատ աւելի կը գտնուին Գում-Գաբուի կողմերը, սկսած են իրենց անտանների ներկայութեամբ պատուել:

Մի նեղուիք,

Դիմեցէք Խաչիկ Ֆէսճեանի դեղարանը, Լանկա Ալաճա-Մէսճիտ թիւ 9, հոն պիտի գտնէք մլուկի փոշի Բարձ, եւ միանգամայն ամեն գրպանի դիւրամատչելի:

ՀԱՆՐԱԳԻՏՄԱՆ



ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie

{مجموعه علوم}

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

1898 ՄԱՅԻՍ 30

ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ԵՏԵՒԷՆ



«Ա.Լ.Ք.Ը. ՓՈԽԱԾ»

Մարդ սկիզբէն չար կը ծնի՞ թէ բարի։ Թողունք Աստուածաբաններուն, որոնք արդէն չատ խելք յոգնեցուցած են այս խնդրին համար, և տակաւին որոշ վերջաբանի մը չեն յանգած։

Սակայն ամեն մարդ իւր կարծիքը, համոզումը կամ հաւատքը ունի։ Ես ալ իմ զգացումս ունիմ։

Փակագծի մէջ ըսեմ որ ուրիշներ երբ համոզումով մը կամ հաւատքով մը կը գործեն, ես վարկենական զգացումով կը գործեմ ինչ առթիւ ալ ըլլայ։

Ասոր համար հիմա պիտի ըսեմ որ՝ մարդս ի ինչ բարի կը ծնի։ Ես այսպէս կը զգամ։

Ըսելիքս, հասկցնելիքս անանկ բան մըն է որ՝ որչափ քաջես քաջքես այնչափ կ'երկընայ, սակայն կարելի եղածին չափ կարճապատում ընելու պիտի աշխատիմ։

Հաստատ համոզումի տէր, նկարագրի և զօրաւոր կամքի տէր, քու հաւատքդ իրմով ամրացած, կուռքի պէս պաշտած մէկ անձդ, երբ մէկէն ի մէկ բոլորովին հակառակը գըտնես, փոխուած տեսնես, ի՞նչ կ'ըլլաս։

Այն անձը՝ որ իւր ընկերին, բարեկամին կամ եղբորը պարտական եղած ձեռնառուութիւնը կ'ընէ, և իրեն շնորհակալութիւն

յայտնած ատենդ «Ադ ի՞նչ ըսել է, իմ ըրածս պարտականութիւն մըն է, չէ՞ ուրիշ բան» կ'ըսէ։ Սակայն երբ պզտիկ և անկարեւոր միջադէպէ մը, շահու խնդրի մը առթիւ, կամ հոգեկան պատճառով և կամ կարծեաց տարբերութան մը համար կը բարկանայ և կը սրտնեղի քեզի դէմ. գոյնը դուրս կուտայ, և առաջին անգամ երեսիդ ըսելէն յետոյ՝ ուրիշներու առջեւ ալ կը կրկնէ «Ապերախտը, անաւթը, մեղք իմ ըրածներուս, այնչափ քաջներ ըրած եմ իրեն, մէկէն ասանկ ոտքի տակ առնէ, հէ՛... եւ այլն»։ Ի՞նչ գաղափար կը կազմես իւր վրայ։

Այն մարդը՝ որ իւր ունեցածին աւելորդովը աչքի գարնելիք բան մը ըրած է։ Ըսենք թէ եկեղեցի մը շինած է, և ազգին օգտին համար շատ մը բաներ ըրած է։ Բիւր շնորհակալութիւն. արդէն յաջա ազգին մեկենաս մը դարձած է։ Սակայն երբ ադով չի գոհանար և կը սկսի ամէն խնդրի մէջ նետուիլ, «Ասկէց ետքը ես ազգին և ոչ մէկ գործին չեմ խառնուիր» յայտարարած ըլլալովը մէկտեղ՝ որ դի գտունաս իր մատը մէջը կը տեսնես։ Եւ երբ կը բաւէ որ իր մարդն ևս, իր աչքը մտած ես, իր պաշտպանեալն ևս, քեզի համար լեցուն ամսականով պաշտօն չի պահսիր, ոեւէ Ազգային հաստատութեան մէջ։ Ի՞նչ կ'ըսես ասանկ մարդուն։

Այն անձը՝ որու հոգին սեւցած է արդէն հակաստուածային արարքներով, և մարմինը փոռած հակաբնական աղտեղութիւններ

րով, ասոր անոր, մասնաւորներու սիրելին, պաշտելին է եղած աւելի մամոնային հրաշագործեամբ, երբ զինքը Սրբատեղին — եկեղեցին կը տեսնես, ո՛ւր բարձրաձայն քովինները անհանգիստ ընելու աստիճան աղօթքներ կը մոթմոթայ, այս այն կը չախէ, իւր մէկ խօսքը գետինը չիյնար, չէ՞ս ըսեր ասանկ մարդուն «Պէ՛ մարդ, աս ի՞նչ է ձեռքէդ քաշածնիս, ի՞նչ ես տուեր չես կրնար առնել»։ Բարձր ես ըրեր աղօթք համար է ամենը... հա՛յ գլխուդ փարատի ըրած բարիքդ, և չի հասնէիր ընելու, գէթ ազգին գլխուն պատուհաս մը կը պակսէր. ազգը քեզի պէս բարեբարներ չ'ունենար նէ միթէ պիտի փճանա՞ր»։

Երբ կը տեսնես մէկը որ եկեղեցի մը և դպրոց մը կը վերաշինէ ի փառս մարդկան, և անպատկառօրէն պաշտելի Սուրբի մը անունին կը կցէ իւր մականունը, գիտէ՞ք ինչ տպաւորութիւն կ'ընէ մարդուն վրայ. գոցենք այդ կէտը, սակայն վերջը երբ լսես որ լումայ մը անգամ չէ ծախսած իր գըրպանէն, և ուրիշ մեծանձն մարդու մը շնորհիւն է որ վերաշինուած են եկեղեցին և դպրոցը, այն ատեն ի՞նչ կ'ըլլաս։

Այն՝ որ դէմը ելած մարդուն բարեացակամութիւն կը ցուցնէ այն աստիճան որ՝ ըսելդ կուգայ թէ՛ «Այս մարդը լոկ բարիք ընելու համար աշխարհք եկած է»։ Բայց շատ չ'անցնիր, երբ կը նշմարես որ ցոյց տուած ծայրայեղ բարեացակամութիւնը միայն և միայն իւր շահուն և կամ իւր մէկ քանակաճոյքին համար է եղեր։

Ուրիշ մը՝ որ քեզ կը շողոքորթէ, կը փայփայէ, կը փառաւորէ, և չունեցած արժանիքներուդ տէր ըլլալդ կը ցուցնէ քեզի. սակայն քիչ վերջը պիտի տեղեկանաս որ՝ այդ ամենը ըրած է միայն զքեզ շահագործելու համար։

Այն վաճառականը՝ որու քով տարիներով հաւատարմաբար կ'աշխատիս, և առ ի վարձատրութիւն, երբ իւր գէնը գոցելու համար քու ամսականներէդ կը ծայրատէ։

Այն անձը՝ որ հանդիպած մարդուն սիրալիր և անկեղծ բարեկամութիւն մը կը խոստանայ, և քեզ հետ խօսած ատենը կը տեսնես որ անթիւ անհամար բարեկամներու անուններ կը շարէ, ամենուն ալ զատ զատ

մէյմէկ բարեմասնութիւնները դրուատելով, կ'ապշիս կը մնաս թէ՛ այս մարդը ո՛ր աստիճանի համակրելի մէկն է եղած որ՝ այդչափ մեծանձն մարդոց բարեկամութիւնը վայելած է, սակայն հոգ մի ըներ, շատ չ'անցնիր, օր մըն ալ նորէն իւր բերնէն պիտի լսես որ նախապէս թուած բարեկամները մէկիկ մէկիկ աշխարհիս ամենէն վատ և ստորին մարդիկը եղած են, և տարակոյս մի ունենար որ օրին մէկն ալ դուն եւս անոնց կարգը պիտի դասուիս։

Այն առեւտուրի մարդը՝ որն որ «բարեկամութենէ վնաս չի գար սկզբունքը» բարեկամները խտրելու մէջ կ'ըմբռնէ։

Այն ազատամիտը՝ որն որ ազատամտութիւնը անպարկեշտութեան մէջ կ'ըմբռնէ։

Այն Առաջնորդը՝ որ խեղճ տնանկներու և որբերու իրաւունքը կը շորթէ առանց խղճահարելու։

Եւ այն քահանան՝ որ աղքատին կը զլանայ իւր պարտականութիւնը, և հարուստին կը շուայլէ անարգ շողոքորթութիւնը ի հաշիւ մամոնային։

Ալ երկար չընեմ, դուք կրնաք ձեր միտքերուն թռիչներ տալ, և այս օրինակներուն վրայ տակաւին հարիւրաւոր բարդումներ և յաւելումներ ընել, որովհետեւ կը վերցնէ։

Երբ թուածներէս մէկուն հանդիպիմ, իմ ամբողջ զայրոյթս թափելու համար երեսն ի վեր կը պոռամ «լոկ փութ»։

Անանկ բառ մը մէջտեղ նետեցինք որ՝ շատերուն նոր պիտի երեւայ, և պիտի հետաքրքրուին։

Պիտի աշխատիմ կրցածիս չափ այդ բառին բացատրութիւնը տալ, սակայն պիտի ալաչեմ որ մէջերնուդ ով որ կ'ուզէ հետս թող գայ, ստակս պահիկ մը աչքերնիս գոցենք, երեւակայութեան լսարանները վառենք, և ամենքս ալ իրարու պզտիկ պզտիկ աղբարիկներ ըլլանք. համարինք թէ մեր տունն ենք, հեռո՛ւ, Պօլսէն շատ հեռո՛ւ, գաւառի մը անկիւնը, բլուրի մը կողին վրայ թառած գիւղ մի։

Խօսքերնիս խօսք, անանկ չէ՞... օն ուրեմն։

— Քա հա՛րս, արեւ ձաթեց... ձա՛ն տուր տղայը, թող ելլեն... հերիք պառկին:

Արշալոյս նոր կը նետէ իւր տմոյն չողերը. մայրիկնիս մէկիկ մէկիկ ձայն կուտայ մեզի:

Մահիճնիս և վերամակնիս խոշորացոյց և երկայն կապերու մըն է, որու մէջ փաթ-թուած էինք իրիկուընէ հինգ վեց պզտիկ-ներ, կէսը վրանիս կէսը տակերնիս:

Աչից կոպեր շփոփելով շատ դժուարաւ կը հեռացնենք Մորիէոսը. քունն ի աչերնիս, գլտոր մտոր կ'ելլենք դուրս մեր ամենա-ծառայական մահիճէն. որերնիս կը խնդանք, որերնիս կուլանք, որերնիս կը թզկանք. մէկերնիս մայրիկ կ'ըսէ, միւսը մեծ մայրիկ կը կանչէ, անդիինք հայրիկ կը պուռայ. ամե-նուն ալ խօսք հասկցնելու է:

Մեծ և լայն ծառի մը կոճղէն շինուած միակտուր փայտէ բոլորակ սեղանի մը շուր-ջը ծալապատիկ շարուած, փայտէ խոշոր ամանի մը մէջէն, փայտէ խոշոր դգալներով տաք տաք լիւն-պաւը կը լափենք — մեր առտուտն նախաձաշիկը:

— Է՛, հա՛րս... փոր մը ունէիք կշտացաւ... ալ մենք մայրիկին քովը գնացէք:

Ամենքս մէկ բըթըր բըթըր կը վազենք մեծ մայրիկին՝ «Մա՛մ, մամի՛կս, մամս» կանչ-ուըռտելով, պոռչտելով:

Սակայն մեծ մայրիկնիս քիչ մը խիտ էր. մինչեւ որ իւր թուշումած այտերը ժպիտ մը չ'ուղղէին մեզի, չէինք համարձակեր իրեն մօտենալու:

Օր մըն ալ երբ մամիկին քով կը վազէինք, մէկէն կանկ առինք ամենքս ալ. մեծ մայ-րիկը դէպ ի արեւելք դարձած, ետեւէ ե-տեւ կը խաչակնքէ կը կենայ. արեգակն ալ դիմացի բլուրին վրայէն նոր գլուխը վեր կը հանէ. մենք ալ ուշադիր՝ աչուընիս խողը-տելով այդ խոշոր և փայլուն սկաւառակին ամբողջութիւնը տեսնելու կը ճգնինք:

Մէկէն ի մէկ ես պուռացի:

— Մա՛մ, մա՛մ... նայէ՛ նայէ՛... բլու-րին գլուխէն մուխ կ'ելլէ... տեսա՞ր:

— Ես ալ տեսայ... նա՛ մամիկս... կը մկայ, չե՞ս տեսներ:

Եւ ամենքս միեւնոյնը կը կրկնենք. մա-միկնիս ուզեր չ'ուզեր ուշադրութիւնը մեզի պիտի դարձներ. ինք կը նստի, մենք ալ ծնգերուն վրայ, անութներուն տակը կը

թառինք, և հարցումներու տարափ մըն է կը տեղանք մամիկին գլխուն:

— Ան տեղ ի՞նչ կայ մա՛մ:

— Ինչո՞ւ համար կը մկայ:

— Ինչո՞ւ մուխ կ'ելլէ:

— Ո՞վ կայ հոն:

Մեր մանկական անզուսպ հետաքրքրու-թիւնը չափ ու սահման չունի. բան մը որ ուշերնիս գրաւեց, գլխու վրայ դադտնեացը թափանցել կ'ուզենք. և չենք թողուր, ժա մանակ ալ չենք տար որ խեղճ մամիկնիս պատասխանէ մեզի:

— Համբերեցէք որ բերաննիդ համ դայ, զաւակներս, կեցի՛ք, պիտ'ըսեմ ձեզի հիմիկ թէ ինչո՞ւ մուխ կ'ելլէ անկէց:

Մտիկ ընենք, աղէկ ականջ տանք, մա-միկը խօսիլ պիտի սկսի, հետեւինք բերնէն թափած հատիկ հատիկ բառերուն:

— Ան բլուրը տեսա՞ք ա՛, ուր է մուխ կ'ել-լէ... անտեղաց ժաժա՛ր կ'ըսեն. ժաժ-քա-րը Ալքերուն տունն է... հիմիկ որ մուխ տե-սաք, ալքերը կրակ կը վառեն անոր համար է... անոնք գիշերը դուրս կ'ելլեն, ցորեկը իրենց տունը կը մնան... շատ գէշ են ա-նոնք... շատ չարութիւն կ'անեն մեզի... էրդիքներէն, կտուրներէն ներս կը մտնեն... քնացած ատենդ պուկիդ կը չոքին... իրի-կուընէ պառկած ատենդ երեսդ խաչ հա-նած չես նէ՛ կը խեղդեն քեզի... հաւատդդ զօրական չէ նէ՛ սիրտդ կը քաշեն կը հանեն, կը տանին կուտեն... մարդու սիրտ շատ կը սիրեն... համով կ'ըլայ կ'ըսեն... հիմիկ որ կրակ վառած են, ո՞վ գիտէ որուն սիրտը պիտի բոհեն ուտեն, եւայլն եւայլն:

Ալքերնիս խոշոր խոշոր բացած մեր մա-միկին շրթներէն կախուած ենք. կատար-եալ համոզումով մը պատմած Ալքի առաս-պելը մտիկ կ'ընենք. Ալքին հասուցած չա-րիքներուն, գործած պէսպէս խժդժութեանց կենդանի օրինակները աչքերնուս առջեւը կը դնէ՛ կարգ մը տղայոց, մարդոց և կա-նանց անունները տալով, որոնց որոշիչ յատ-կութիւնները և դիմադժերու կարի տգե-ղութիւնները՝ ալքին ըրած փոփոխութեանց անթերի ապացոյցները կը նկատէ:

Մանաւանդ Ալքին դիմադիծը նկարագրած ատենը մարմիննիս փուշ փուշ կ'ըլլար. երբ որ անունը լսէինք՝ իւր մերկ և թաւամազ

երկայն ու բարակ ոսկրուտ մարմինը, իւր սատանի չար աչքերը, թնճկած և երեսն ի վար թափած մազերը տեսած կ'ըլլայինք. պատկերը աչքերնուս առջեւ կուգար և սուկում կը պատճառէր մեզի, գողգողալ կուգար վրանիս. Ալբը չարութեանց կեդրոնացումն էր մեզի համար, և մեր պզտիկ ուղեղները իւր առասպելներուն այն աստիճան ենթակայ եղած էին որ՝ շատ գիշերներ խեղդուք խթղդուքով մը սարսափահար կ'արթննայինք երազնուս մէջ զինքը տեսած ըլլալնուս համար:

Մարդկային սեռին դէմ ունեցած ատելութիւնը չափազանց է. մանաւանդ գեղեցիկ սեռին շատ թշնամի է. իւր այցելութիւնը վայելողները ընդհանրապէս նոր տղայ բերող հարսները կ'ըլլան, որոնց նորածին թոմարուկի մոմարուկի մանուկները կը փոխէ և անոնց տեղը իւր վիժած տգեղ արարածը կը դնէ:

Մեր գիւղին — օդէն էր թէ ջուրէն — բնակիչները ընդհակառակը շատ գեղեցիկ կ'ըլլային. մանչ աղջիկ կը մրցէին իրարու հետ գեղեցկութեան կողմէ. եթէ կար քանի մը հատ տգեղ արարածներ, որոնք մատի վրայ կը համրուէին, ալբ փոխ կը կանչէին անոնց:

Մեր գիւղը շրջապատուած էր շատ մը գիւղերէ, որոնց մէջ մէկ հատիկ էր մերինը իւր դիրքին առաւելութիւնովը. մանաւանդ իւր բնակչաց հանած համբաւին և գեղեցկութեան կողմանէ շրջակայից նախանձու առարկան էր. առակի կարգ անցած էր «Խընձոր պիտի ուտես՝ Սեւքարէն, նուս պիտի քաղես՝ Բլրակէն, հարս պիտի առնես՝ Աղուորաւանէն». սակայն բարութեան և գեղեցկութեան թշնամին — Ժած-քարի ալբերը — պատուհաս մըն էր մեր գլխուն:

* * *

Ներեցէ՛ք, ձեր համբերութիւնը չարաչար գործածեցի, կարճապատում ընել խոստացայ՝ երկարապատում եղաւ. սակայն եթէ քանի մը վարկեան աւելի զիս մոիկ ըրած ըլլալովնիդ վրայ տուիք նէ՝ պարտաւոր եմ տուածելու, իսկ եթէ...

Իսկ եթէ քանի զգացումիս, ըմբռնումիս, իտէպիւս, գաղափարականիս բոլորովին հակառակը, գձձութեանց և ստորնութեանց

կեդրոնացումը տեսնամ անանկ մարդոց վերայ, որոնք մեծ դեր մը ունին, և պիտի ունենան ընթացիկ տարիներուս մէջ, իրենց համար շատ հեշտիւ պիտի ըսեմ Ալբ փոխ քարոյ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Շաբ. 8 հուրի 11 եւ վերջ)

1. Առնելիքի մը ամբողջութիւնը պարտաւորող շնորհուած ըլլալը ապացուցանող էություն (Խորհ. Եփեսոս):

Պատի թաթիւ իսկանամէ օլտըր քի... տէ մուգիւմ ... զիմէթիւտէ ... Թարիւրու վէ թարաֆընտան մուգիւ պիւր գըթա էմիւ մուհարէր սէնէտ մուճիպինճէ գարդէն մաթլուպըմ օլտան ... զրուշ հագգըմը թէրք վէ իսքեթ իլէ էֆէնտի միւմաիլէյին զիմէթիւնի պէրի իլէտիկիմի վէ սէնէտ մէգիւրտէն տօլայը թալէպ վէ տաւայա պիւր կէօնա հագգըմ գալմատըղընը միւպէյին իշպու իպրանամէմ պիթթանդիւմ թագաիւմ գըլընտը:

20 փարանց Կուլ (Եսայի)

(Սորաբէր-Եփեսոս)

2. Առնելիքի մը մէկ մասը պարտաւորող շնորհուած ըլլալը հաստատող իսկանամէ (Խորհ. Եփեսոս):

... աէ մուգիւմ ... զիմէթիւտէ ... մուհալլէտէ քեային միւթէսարըրք օլտուղըմ պիւր պապ իսանէնին ... վագթա գատար իլէմիլ օլտան պէտէլի իճարտան տօլայը ալաճաղըմ օլտան ... զրուշտան բուպընը, եանի ... զրուշը թէրք վէ իսքեթ իլէ մէգպուր ... ըն զիմէթիւնի թէպիւրի իլէտիկիմիտէն պէտէլի իճարէնին մարիւղիլըր բուպընը պուշտան պէօյլէ թալէպ վէ տաւայա պիւր կէօնա հագգըմ գալմատըղընը միւպէյին իշպու իպրանամէ թանդիւմ վէ իթա գըլընտը:

3. Սէնէտի մը երաշխաւորը (Եփեսոս) երաշխաւորութենէն էություն ընել այսինքն ազատել (Խորհ. Եփեսոս):

... ըն իշպու սէնէտէ պանա մէտիւն օլտուղու ... զրուշա քէֆալթ իտէն ... տէ

մուգիւմ . . . ըն ճիհէթի քէֆալէթտէն տօ-
լայը զիմէթինի իպրա իյլէտիկիմի միւպէյին
իշպուն մահալէ շէրհ վէրիւտի :

Ծան . — Այս տեսակ էպոսն սէնէֆին վրայ
կը գրուի :

4. Ապրանքի մը փոխարժէքը առնուած
ըլլալը ապացուցունող էպոսնաթ : (Իպոսէ է-
թէֆ) :

. . . տէ մուգիւմ . . . ա ֆիրուսթ իթմիշ
օլտուղում . . . ըն սէմէնի օլան . . . զրուշը
էֆէնտիի միւմաիլէյն եէտինտէն թէմաւէն
ախզ վէ գապզ իյլէտիկիմտէն մէգքիւր . . .
ըն սէմէնիէ միւթէալիզ քեաֆֆէի տաա-
վիտէն զիմէթինի իպրա իյլէտիկիմի միւպէ-
յին իշպու իպրանամէ թանգիւմ գըլընտը :

5. Խնամակալին (վաթ) կողմէ ոեւէ առ-
նելիքի մը գանձուած ըլլալը հաստատող էպ-
ոսնաթ : (Իպոսէ էթէֆ) :

Հասպ էլ վէսայէ միւթէվէֆա . . . ըն հա-
լը հայաթընտա . . . թարիսլու իճար մու-
գավէլէնամէսիլէ . . . տէ մուգիւմ . . . է-
ֆէնտիյէ իճար իյլէմիշ օլտուղում . . . տա
քեաին խանէսինին պէտէլի իճարը օլան . . .
զրուշը միւթէվէֆանըն վէրէսէսի իշին թէ-
մաւէն ախզ վէ գապզ իյլէմիշ օլտուղում
տան միւսթէճիրի մէգպուր . . . էֆէնտիին
մէգքիւր խանէնին պէտէլի իճարընա միւ-
թէալիզ քեաֆֆէն տաավիտէն պիլվէսայէ
զիմէթինի իպրա իյլէտիկիմի միւպէյին իշպու
իպրանամէ իթա գըլընտը :

6. Ժառանգորդներու միջեւ փոխանակ-
ուած էպոսնաթ : (Իպոսէ էթէֆ) :

. . . տէ մուգիւմ իքէն վէֆաթ իտէն փէ-
տէրիմիզ . . . ըն իրսէն ինթիզալ իտէն ա-
գար վէ նուգուտ պիլճիւմէն էմվալինի պէյ-
նիմիզտէ պիլթէրազլի թագսիւմ վէ հէր պի-
րիմիզ հիսէի մուսիպէմիզլի ախզ վէ գապզ
իյլէմիշ օլտուղումըպտան մուրիսիմիզ միւ-
թէվէֆա փէտէրիմիզին թէրէքէսինէ միւ-
թէալիզ քեաֆֆէի տաավիտէն հէր պիրի-
միզ ախէրին զիմէթինի իպրա իյլէտիկիմի
միւպէյին իշպու իպրանամէ . . . նիւսիէ օ-
լարագ պիլթէանգլիւմ վէ պիլ իմզա թաաթը
գըլընտը :

Ծան . — Իւրաքանչիւր ստորագրութեան
համար 20 փարանոյ փուլ փ աղցնելու է :

7. Մասնաւոր առնելիքի մը համար գըր-
ուած էպոսնաթ : (Իպոսէ էթէֆ) :

. . . տէ մուգիւմ . . . էֆէնտի զիմէթին-
տէ . . . թարիսլու պիր գըթա սէնէտ մու-
ճիպինճէ ալաճաղըմ օլան . . . զրուշ հազ-
գըմտան . . . զրուշ ախզ վէ իսթիֆա վէ
միւթէպաքիսինի թէրէք վէ իսքեաթ իյլէտի-
կիմտէն , սէնէտ մէգքիւրլէ ալաճաղըմա միւ-
թէալիզ քեաֆֆէի տաավիտէն մէգպուր . . .
էֆէնտիին զիմէթինի իպրա իյլէտիկիմի
միւպէյին իշպու իպրանամէ իթա գըլընտը :

8. Յանձնարարուած ապրանքի մը փոխար-
ժէքը առնուած ըլլալը ապացուցանող էպո-
սնաթ : (Իպոսէ էթէֆ) :

. . . տէ մուգիւմ . . . էֆէնտիյէ (Բարիզ)
տէն ճէլզ վէ քէնտուսինէ ֆիրուսթ իյլէ-
տիկիւմ (հոս առնուածը գնել)ին պէտէլա-
թընը քեամիլէն ախզ վէ իսթիֆա , վէ խու-
սուսը մէգքիւրտէն տօլայը , պիր կէօնա հազ-
գըմ գալմաուղընտան էֆէնտիի միւմաիլէյ-
հին զիմէթինի իպրա իյլէտիկիմի միւպէյին
իշպու իպրանամէ իթա գըլընտը :

9. Իպոսէ աթ նմոյշ :

Փէտէրիմիզ միւթէվէֆա . . . տան միւն-
թէգիլ օլուպ , ճէմի նուգուտ վէ էմվալի
սէրմայէի շիրքէթ իթթիսազ իտիլտիկի հալ-
տէ , մուգաուտէմա շիրքէթիմիզ պիլթէրա-
զի ֆէսի վէ գաթը մուամէլաթ վէ մուհա-
սէպաթ իթտիկիմիզտէ , հէրպիրիմիզին տի-
կէրի զիմէթինտէ միւթալէպէ իտէճէք պիր
կէօնա հազգըմըզ գալմաուղընտան , իշպու
թարիսի իպրայա գատար ճէրէյան իթմիշ
օլան ճէմի մուամէլաթը ախզ ու իթատան
վէ միւնաուէպաթը սայիրէտէն տօլայը կէրէք
տէյն վէ կէրէք իրա վէ կէրէք քէֆալէթ
վէլէասըլ ճէմի հուգուգա միւթէալիք ամէի
տաալի վէ մուխասէմաթտան հէր պիրիմիզ
ախէրին զիմէթինի իպրայը առն սահհի
շէրի իլէ իպրա վէ իսքեաթ իյլէտիկիմիզլի
միւպէյին իշպու իպրանամէ նիւսիէթէյն օ-
լարագ թանգիւմ վէ թաաթի գըլընտը :

Ն. ԹՕԳԱԹԼԵԱՆ

ԱՅԳԻՆԵՐՈՒ ՆՈՐ ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ



Մ Ի Հ Տ Ի Ո Ւ

Պատասխան քիւ 30 հարցման

Ա.

Վարկենապէս զձեզ գոհացնելու համար, կը փափաքէի անմիջապէս դարմանումի եղանակներուն վրայ խօսիլ. բայց աղէտքին առաջը առնելու, և արդիւնաւոր եզրակացութեան մը հասնելու համար, հարկ համարեցի նախ հիւանդութեան պատճառներուն վրայ կարեւոր բացատրութիւններ տալ, որպէս զի՝ իբր դարման առաջարկուած միջոցներուն ո՞ր աստիճան ազդեցիկ ըլլալուն վրայ որոշ գաղափար մը կազմէք:

Ամերիկայի մէջ շատ երկար ատեններէ ի վեր գոյութիւն ունէր արդէն այս հիւանդութիւնը. և սարակոյս չի կայ թէ, եւրոպայի մէջ ալ Ամերիկայէն բերուած որթատուկերէն փոխանցեցաւ, ուրկէ և տարածուելով հասաւ մինչեւ մեզի: Ինչպէս հիւանդութիւնը՝ նոյնպէս և անունն անծանօթ էր տակաւին ասիէ տարի մ'առաջ մեր այգեստաններու չրջանակին մէջ. բայց հիմա գիտենք թէ աղէտալի փորձանք մ'է անիկա, և այգեպաններու համար կենսական խնդիր մը: Հանրային Պարտուց Վարչութիւնը քաջ գիտնալով անոր հետեւանաց ո՞ր աստիճան ծանրակշիւ ըլլալը, խկոյն պէտք եղած միջոցներուն ձեռնարկեց. բայց ժողովուրդն ալ իր կողմանէ անտարբեր մնալու չէ:

Միւտիու, (Անգլ. mildew) կը նշանակէ բորբոս (+խֆ) և յառաջ կուգայ մանրադիզային սնկարոյտէ մը, զոր Ֆուանսացիք անուանեցին բէոմսութումս վիթիքօլա: Այս վերջինը երկու գլխաւոր մասերէ կը բաղկանայ. — 1. Բուսական կազմած մը, որուն սնկասեր (mycelium) անունը կուտան. — 2. Պտղատու յօրինուածներ, որոնք արտադրիչ եւս կը կոչուին, և ծնունդ կուտան սնկասերին, որ հետեւեալներն են. Պտղատու աղուամագեր (filaments). Ամառնային սփիւռներ (spore). Զմրան սփիւռներ կամ սփիւ-

ռակիթեր (oospore) .

Սնկասերը միեւնոյն անգամ այս մակաբոյծին թէ բուսական և թէ արմատային մասը կը կազմէ, այսինքն՝ որոշ արմատ մը չունենալով, իր մանրադիզային ճիւղերը ուր որ կառչին, հոնկէ ուղղակի իրենց սնունդը կը քաշեն բաղեղներու (սարմաշէֆ) նման, որոնք ծառի մը վրայ հաստատուելէն վերջը, իրենց տարածած ոտներուն և ճիւղերուն երկայնութեամբ մագիլի (բէնէ) ձեւով արմատներ կ'արձակեն. որ այդ ծառին կեղեւէն ներս թափանցելով, արմատներէն վեր ելած բուսուկը (ծառին հիւթը կամ ջուրը) կը ծծեն: Այսպիսի է նաեւ միւտիուին յառաջ բերող մանրէսունկը, որուն սնկասերը գնդակաձեւ նախամագեր (protoplasma) մը կազմուած է խառն բեկիւրկոյն կ'թիւներով, որթատուկի տերեւներու բջիջներուն մէջէն կը սողոսկի, առանց պատուտելու տերեւը, և առանց տ'երեւին երեսը ելլելու: Իր երկայնութեանը վրայ տեղ տեղ գնդակաձեւ այտուցներ ունի, որոնք ծծիչներ են: Այս վերջիններուն միջոցով է որ սնկասերը որթատուկի տերեւներու հիւսկէնը կազմող բջիջներու կողերը ծակելով, անոնց մէջ գրտնուած սնուցիչ հիւթը (բուսաւիշ) կը ծծէ. որով և բջիջները կը չորնան, հետզհետէ տերեւին վերի երեսին վրայ դեղին և թխագոյն բիծեր յառաջ կուգան, տերեւին հիւսկէնը կը քայքայի և կ'սչնչանայ: Ֆիլօքսերայէն աւելի վտանգաւոր է այս որթատերեւի բորբոսը, որ եթէ ժամանակին պէտք եղած միջոցներուն չը դիմէք, հիւանդութիւնը արծարծելէն ետքը ամեն հնարաւոր դարման անգոր և ապարդիւն կը մնան:

Սնկասերը այսպէս բջիջներու հիւսուածքին շուրջը սողոսկելով, արտաստվոր արագութեամբ կ'աճի կը տարածուի, և երբ վերնամաշկի վտանգներու (stomate, բջիջներուն մէջ գտնուած պարագ տեղուանքը, կամ ծակտիկ) հանդիպի, անոնցմէ դուրս կ'ընծիւղի, կը ձեւափոխի այն ատեն, և ծնունդ կուտայ պտղաբեր աղուամագերուն, որոնք եւս իրենց կարգին անկարագրելի արագութեամբ կ'արտադրեն ամառնային սփիւռները (սնկակերու մանրամաղ սերմիկները): Մինչդեռ տերեւի հիսուածքին մէջ մնացած մասը, ուղղակի կերպով ծնունդ կուտան

ժամանակ մը վերջը ձմեռնային սփիւռներու (սփիւռակիթ) :

Պտղաբեր աղուամազերը, ինչպէս տեսանք, ուղղակի սնկասերէն կը ծնին, և խուրձ խուրձ բլթիկներու վտառներէն դուրս կ'ելլեն խիտ առ խիտ, և տերեւին տակի երեսը կը ձեւացնեն սպիտակագոյն բողբոջներ: Վերի վերոյ 1/2 հազ. մէթր (Ֆէթթը) երկայնութեամբ: Ասոնք կը նմանին փոշիացած չաքարի կոյտերու, աստ անդ ցանցնուած, կամ աւելի եղեամբն (ֆերալը) յառաջ եկած սառոյցի աղածիւ նրբաթելերու: Ի սկզբանայդ սպիտակ ընկերը հազիւ թէ տերեւներուն տակի երեսին վրայ մէկ երկու տեղեր կը տեսնուին: Բայց եթէ իրենց աճումը օճանող պատճառներէն մին երեւան գայ — զոր օրինակ խոնաւութիւն —, այդ բիծերը կը բազմապատկին այնպիսի արագութեամբ մը, որ քիչ ժամանակուան մէջ տերեւին տակի ամբողջ մակերեսովը կը ծածկէ: Այս պտղատու աղուամազերու խրձիկներուն (ֆէթթը) վրայ որոշ գաղափար մը կազմելու համար, կրնաք նմանցնել զանոնք երիցուկի (ֆաֆալէա) կամ կանկառի (էնկլաա) հունտերուն, որոնք ինչպէս գիտէք իրենց գաղաթը խուրձ խուրձ աղուամազեր ունին. սա տարբերութեամբ միայն որ, սնկասերի պտղատու աղուամազերը, իրենց երկայնութեան վրայ ծնունդ կուտան վերը յիշուած սփիւռներուն. որոնք զատ զատ մանրադիտակով նայուած ատեն՝ խաղողի ողկոյզի մը ձեւը կը ներկայացնեն:

Մ. Թախլիէօ ըսածին նայելով՝ ամեն գիշեր նոր նոր պտղաբեր աղուամազերու բազմաթիւ խրձիկներ յառաջ կուգան, և խիտ կը ծածկուին սփիւռներով, որոնք այդպէս՝ տերեւներուն վրայ ինկած ցօղի կաթիլներուն մէջ կը բողբոջին: Եւ երբ առաւօտուն ցօղը շոգիանայ, սփիւռներէն ծնած զոյգ մը տղրուկի (ֆէլէ-է) ձեւով բողբոջիկները ծակելով վերնամաշկը կը ներմուծին հիւսուածքին խորութեան մէջ, և յառաջ կը բերեն սպականման նորանոր բոյներ: Միլիօններով յառաջ կուգան այս բողբոջիկները, որոնք՝ բարեբաղդաբար ամեն ժամանակ ուռնակու յարմարագոյն պայմաններու մէջ չի գտնուելով, իրենց մեծագոյն մասը կ'ոչնչանան: Այնչափ թեթեւ և մանրամաղէն

որ, ամենափոքր օդի շարժումով մը, մղոններով հեռու տեղեր կը տարածուին: Եւ եթէ իրենց ճամբուն վրայ, այգեստաններու հանդիպին, և նոյն միջոցին պատահամբ շրջապատ օդը՝ մառախուղով (թաա) ծածկուած, անձրեւոտ կամ շաղոտ (շէ) ըլլայ, այն ատեն՝ անոնք տերեւներուն վրայ կառչելով, արագ աճումով մը կ'ապականեն այգին, միլիոնի սնկասերը յառաջ բերելով. որ իւր կարգին կը շարունակէ իր բուսականութիւնը՝ ծնունդ տալով նորանոր մանրէսերմերու:

Բայց ինչպէս ըսինք, միլիոնն սերնդաւորելու ուրիշ միջոց մ'ալ ունի, որու ձմրան սփիւռակիթ անունը տուինք: Ամառուան մանրէսերմերը տերեւէն դուրս ծնունդ կ'առնեն, և ինչպէս տեսանք, անոնց մեծագոյն մասը կ'ոչնչանան. բայց սփիւռակիթերը տերեւին հիւսուածքին մէջ, միլիոնի ամառուան բուսականութեան ամբողջ միջոցին, և մասնաւորապէս Սեպտեմբրի և Հոկտեմբրի մէջ, անհուն քանակութեամբ կ'արտադրուին:

Սփիւռակիթերը կրկնակի թաղանթներով ծածկուած են, և բոլոր հնարաւոր դարմաններու ուժգնապէս կը դիմադրէ. այնպէս որ տերեւներու հիւսուածքը, ամբողջովին քայքայուելէն վերջն անգամ, անոնք կ'ապրին: Մ. Բախլիէօ կ'ըսէ թէ՝ մէկ քառակուսի միլիմետրի տարածութեան մէջ, այսինքն՝ գնդասեղի մը գլխուն չափ տեղի մը մէջ 200էն աւելի կը գտնուի: Կրնաք հետեւցնել հիմա սփիւռակիթերու որոշատիճան ահռելի վտանգ մ'ըլլալը, երբ երեւակայէք որթատուկերու բազմաշատ տերեւներու հիւսուածքին մէջ պարունակուած, անհամար քանակութիւնը, և դարմաններու մասին ցոյց տուած դիմադրութիւնը:

Ամառնային սփիւռները երաշտութենէ չորնալով, իրենց արգասաբերութիւնը կը կորսնցնեն և չուտով կ'ոչնչանան. որով և յաջորդ տարին միլիոնի սնկասերը յառաջ բերելու անկարող կ'ըլլան: Բայց՝ սփիւռակիթերը այնպէս չեն, չորցած տերեւներուն հետ վար թափելով հողին երեսը կը կենան և երբ տերեւները բոլորովին փոխն հողին տակը կը թաղուին. որչափ օդը ցուրտ, խոնաւ և չոր ըլլայ, իրենց արգասաբեր կարո-

ղութիւնը երբէք չ'աւրուիր: Հոկտեմբեր ամսոյ մէջ, փորձելու համար 16 ժամ ծով վերջ 2 օր շարունակ ոչխարի մ', միլիոնէ վարակուած որթի տերեւներ կերցուցած են. 2 օր վերջը կղզիանքը առնելով, և մանրագէտի տակ դնելով, տեսած են որ բաց ի մէկ քանի հատէ, բոլոր սփռուակիթերը առնելով մնացած են: Միլիոնի այս համառօտ կենսաբանութիւնը բնելով՝ տիտուր իրաւանութեան մ'առջեւ կը գտնուինք. և կը տեսնէք որ, ամառնային սփռուակներէն աւելի, ձմեռնային սփռուակիթերն են որ վտանգ կ'սպառնան որթատունկերու: Ուստի պէտք է ամեն ջանք ի գործ դնել անոնց ծնունդը արգելելու: Եթէ երբէք այգեստանները վարակուած են, և հիւանդութիւնը իր վերին աստիճաններու մէջ կը գտնուի, գոնէ ձմեռնային սփռուակիթերը բնաջինջ բնելու համար, տերեւները պրելու է: Բայց աւելի աղէկ է կանխարգել միջոցներու դիմելով հիմնապէս աղէտքին առաջըր տունել: Գիտնալով որ անհամբեր կ'սպասէք այս կէտին, միլիոնն ծանօթացնելու այս համառօտ տեսութիւնը բաւ սեպելով, կ'անցնիմ անմիջապէս դարմանման եղանակներուն վրայ խօսելու: Միլիոնի երեւումէն ի վեր, բազմաշատ փորձերով հաստատուեցաւ թէ՛ իրենց մէջ պղինձ պարունակող բաղադրութիւնները, բարրասում յառաջ լերող հիւանդութեանց դէմ գտնուածներուն մէջ, միակ աղբեցիկ դեղերն են: Եւ ասիկա աւելի դիպուածով գտնուած է: Փռանալի այգեստաններու մէջ, սովորութիւն ունին որթատունկերու խաչարները քաշէ, հերէ՛ք) և կապերը պղնձի ծծմբատով (կէօղ Բաշը) հակառնելու: և ասկէ զատ Պուռլինիօնի, Պոուտօի, եւայլն կողմերը, ճամբու վրայ գըտնուած այգիներու խաղողները գողերու ձեռքէ տղատելու համար, սովորութիւն ըրած էին, ճամբուն մօտ գտնուած որթատունկերուն վրայ, ջուրի մէջ լուծուած պղնձի ծծմբատ սրսկել մերթ ընդ մերթ, որպէսզի թունաւորելով՝ ոչ ոք գտի անոնց:

Միլիոնի երեւումէն 1878ին) բաւական ժամանակ վերջը (188 ին) տեսան որ, պղնձի ծծմբատի սղեցութիւնը կրող որթատունկերը գերծ կըմնան անոր աւերումներէն: Դրկէ քաջալերուած՝ սկսան ամեն տեղ փոր-

ծել և յարմարագոյն չափեր և բաղադրութիւններ սահմանել:

Այս բաղադրութիւններուն մէջէն ամենէն աղէկները գտնելով, պիտի ցուցնենք թէ իրենց պատրաստութեան եղանակը, և թէ իսկնց աղցեցութեան աստիճանը՝ բաղադրամասը մէկգլմէկու:

Առաջին փորձերը կատարուեցաւ 1888ին պղնձի ծծմբատի պարզ լուծմունքով 1000 լիթրա ջուրի մէջ հալեցնելով 3—4—5 քիլօ պղնձի ծծմբատ, որոնք ամենալաւ արդիւնք տուիւ:

Ահա տաիկ թէ ի՞նչպէս կը պատրաստեն այս պարզ լուծմունքը: Ամենէն դիւրին և էարճ ճամբան, 100 լիթրա ջուրին մէջ 20 քիլօ պղնձի ծծմբատ հալեցնել և արհեստէն որ գործածման ժամանակ վրան աւելցնելու է պէտք եղածին չափ ջուր: Ելլինքն՝

50 լիթրա տաք ջուրի մէջ հալեցուցէք 10 քիլօ պղնձի ծծմբատ, փայտէն պղնձէ կամ հողէ ամաններու մէջ (ուրիշ մետաղները պղինձը կը տարազադրեն և կը միանան տնոր հետ): Այսպէս պատրաստուած պղինձի ծծմբատը իր մէջ կը պարունակէ իւրաքանչիւր լիթրային 200 կամ ծծմբատ պղինձի արդէ՛ եթէ փափաքիք որ գործածութեան համար ձեր լուծմունքը 400—500 կամ աղ պարունակէ իւրաքանչիւր 100 լիթրա ջուրին մէջ, այն ատեն գործիական՝ տակաւի մը մէջ կը լեցնէք 100 լիթրա ջուր, և վերոյիշեալ պատրաստութենէն ալ վրան կաւելցընէք 2 կամ 2½ լիթրա, խառնուրդը պատրաստուելէն վերջը կրնաք գործածել, կամ փոշեմաղ ձարձատիջով մը (pulvérisateur), և կամ եթէ չ'ունիք՝ ցախաւելով: Առաջինը աւելի յարմարագոյն է. թէ աժան կ'ըլլայ, թէ դիւրին և թէ լուծմունքը մառախուղի պէս բարակ մաղուելով, ամեն կողմ կը տարածուի ու ժգնապէս:

Գոնէ երեք անգամ պէտք է դարմանել որթատունկերը, այս թէ հետագայ առաջարկուելիք դեղերով: Առաջինը՝ մայիս 15ն մինչեւ 10. երկրորդը՝ 3—4 շաբաթ վերջը, այսինքն՝ մայիսի 25ն յունիս 5. երրորդը՝ յունիսի վերջին շաբաթէն մինչեւ յուլիս 5: Եթէ հարկ տեսնուի պէտք է չորրորդ անգամ մ'ալ կատարել այս գործողութիւնը օգոստոս ամսուան մէջ: Ցուրտ երկիրներու

Համար պէտք է աւելի ուշ սկսել :

Թէեւ ոմանք կ'ըսեն թէ պղնձի ծծմբատին պարզ լուծմունքն տերեւները կ'այրէ , բայց ուրիշներ ալ հակառակը կը պնդեն . և տերեւներուն այրումը կը վերադրեն արեւու կիզիչ ֆերմութեան , հետեւեալ բացատրութեամբ : Երբ գործողութիւնը կատարուի չոր օդի ժամանակ և կիզիչ արեւուն տակ , այն ատեն փոխանակ լուծմունքն տերեւներուն վրայ ամեն կողմ հաւասարապէս տարածուելու , տեղ տեղ կաթիլ կաթիլ ժողովելով , տաքութեան պատճառաւ ֆուրք անմիջապէս կը չորիանայ , և ապա մեծ քանակութեամբ տեղ տեղ կուտակուելով՝ տերեւին հիւսուածքը կ'այրեն և թխաղայն բիծեր յառաջ կը բերեն : Ուստի՝ երբ այս բաղադրութիւնը գործածելու ժամանակ , պէտք է որոշել այնպիսի օր մը , որ ամպամած և զով ըլլայ . և կամ եթէ այդպիսի օր մը չի գտնուի , իրի կուսն անշուշտ մար : Ժողովելու վերջը , գիշերուան մէջ կատարել գործողութիւնը :

Երկրորդ՝ կ'ըսուի թէ այս բաղադրութիւնը կաշտանութիւն չունենալով , անձրեւ եկած ժամանակը կը հալի և կ'անհետանայ : Բայց ամեն պարագայի մէջ Տր . Բաթոնիֆօն կը յանձնարարէ մասնաւորապէս , այս բաղադրութիւնը , ու տեղը խաղողներու համար :

Վերոյիշեալ բաղադրութեան անպատեհութիւններուն առաջքը առնելու համար , փորձեցին ծծմբատին հետ ուրիշ նիւթեր գործածել . որոց վրայ պիտի խօսինք յառաջիկայ թւով :

Ղ. ԲՈՒՍ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ



Հւնդիւնի 24 թիւ հարցման պատասխան մը զրկած է մեզ Մեքսիկէի Մուքիտանի , զոր նոյնութեամբ կը հրատարակենք :

Այս մասին փորձառու անասնաբոյժի մը մեզ հաղորդած կարծիքն ալ պիտի ներկայենք ի ստորեւ յարգոյ ընդերցողաց :

«ՏՕՂՈՒՃԱ» ԿԱՐԿԱՄԱԽՏ

Իւր տեսակները , դարման եւ զգուշական միջոց

Երկու տեսակ կարկամախտ կայ , մին անծառնութեամբ պատճառներէ յառաջ կուգայ , երկրորդն ալ պաղէ , և կ'ըսուի սեփական idiopathique , միւսն երկրորդական՝ և յառաջ կուգայ շատ մը կերպ պատճառներէ , ոչք կրնան անսանոյն յանկարծական և անտանելի ցաւ մը պատճառել : Զոր օրինակ , անսանոյն վրայ գէշ կերպով եղած մալեւլ (castration) և այլ վիրաբուժական մեծ գործողութիւն մը , ծանր կերպով առնուած խորին վէրք մը , որեւէ մէկ ոսկորի խառնաշփոթ կերպով խախտում մը՝ որք տարօրինակ վիշտ կամ ցաւ մը կրնան տալ , անսանոյն կարկամախտի պատճառ կրնար ըլլալ :

Ախտանշանք . — Կարկամախտը եթէ անսանոյն որեւէ մէկ կողին կողմն է , ոչնախայարի սիւնը կողմնակի կը թիւրի , եթէ կռնակի կողմն է այդ մասը կը ձգտի (կրէւ-ճէ) , իսկ եթէ լանջքի , կուրծքի և որովայնի մի կողմն է , ծռութիւն մը , կորութիւն մը կը նշմարուի այդ մասին վրայ , մէկ խօսքով մարմնոյն այն կողմը որ այդ հիւանդութեանէ կը բռնուի , հետո պնդութիւն մը , բերտութիւն մը կ'ունենայ , և որչափ այդ բերտութիւն աւելնայ վիշտն ալ աւելնալով , կրնար վարկենական մահ պատճառել տար , եթէ անմիջական ազդու միջոցներ չը գործածուին :

Դարման . — Ցաւը մեղմացնելու և անմիջական մահացու վտանգի մը առաջին վարկենապէս առնելու համար , նախ ա՛ն մօռֆին 3 ցորեն , ջուր՝ (աւելի լաւը անձրեւի ըլլայ Eau distillée) 2 սպուրի դգալ : Զորը նախապէս եռացնելէ և պաղեցնելէ ետք մօռֆինի հետ խառնէ , լեցուր այդ բաղադրութիւնը պատրաստի ունեցած սրածայր սրնդիդ (շէրէնկայ) մէջ , ապա՝ կարկամախտը ո՛ւր որ է , նոյն տեղի մորթը ձախ ձեռքիդ մատներովդ բռնէ , և ոսկրէն կամ իւր մորթին որեւէ տեսակ մասէն բարձրացնելէ ետք , աջ ձեռքդ բռնած սրնդովդ մորթին

ներսի կողմը հեղուկը ցայտեցնելով հոսեցուր, պիտի տեսնես որ անասունը վարկենապէս պիտի հանդարտի, և եթէ կէս կամ ժամ մը վերջ նորէն նշան ցոյց տայ, կրկնէ գործողութիւնը մինչեւ որ ցաւը արմատէն ջնջելու համար հետեւեալ պատրաստութիւններն տեսնես: Նախ և առաջ մորթի արտաշնչումը դրգուելու համար առնելու է մետաղէ ջեւոց մը որ 40—50 հարիւրամեթր երկայնութեամբ կտրէ մը՝ և կրակարանին վրայ ալ ամեն կողմը ծակծկուած խուփ մը ունենայ, և մէջը բարկ կրակ լեցնելու է, անասնոյն վրայ լայնկեկ ծածկոյթ մը ձգելէ ետք՝ կր կով լի այդ ջեւոց անասնոյն մարմնոյն առկը բռնելով մէկ ձեռքիդ բռնած մէջ լեցուն ունեցած ցրդի (սփռ) լօլիկէ (հփփէ) երբեմն երբեմն կրակին մէջ լեցնելով ծխէ, (ցրդի միգիկ չը գտնուած տեղը խոնկ կրնայ գործածուիլ): Ապա առէ՛ք.

1. Սաշխաշի գլուխ	5 հատ
Կաւաւատի հունտ	3 տիրհէմ
Ջուր	1 օխա

Սաշխաշի գլուխը և կաւաւատի հունտը ջրի մէջ եռացնելէ և պղնձեցնելէ ետք խմցուցէք: Եթէ լուծողական դեղի պէտքը զգացուի, առանց երկար բարակ բաներ պատրաստելու, կրնաք առնել 150 կամ թգենիի իւղ (huile de ricin) և շիշի մը մէջ լեցունելէ ետք՝ քիչ մ'ալ տաք ջուր աւելցնելով կը խմցընէք:

2. Սաշուած բաղրջուկի ջուր (է-դէֆօֆօն)	300 տիրհէմ
Մուզ (ֆօն Իիւսսա)	3 »
Քափուր (սփփէ)	150 »
Հաւկիթի դեղնուց	1 հատ

Քափուրը կը փոշիացնես, բաղրջուկի ջրին և հաւկիթի դեղնուցին մէջ լաւ մը հալեցնելէ ետք, մուզը կը յաւելու և երկու անգամէ կը խմցնես: Մուզը ձիւրու և եգերու համար 10էն 20, ոչխարներու 5—10, խոկ շուներու համար մէկէն 5 կրամէ աւելի պէտք չէ տրուի:

Այս նախնական անհրաժեշտ խնամքներն տալէ ետք, կրնաք անասնաբոյժ մը կանչել, եթէ կայ, հսկառակ պարագային՝ քիչ մը գլօսօֆօն կամ եթէր շնչեցուցէ՛ք անասնոյն՝ և շարունակեցէք խմցնել վերոյշանակեալ վերջին բաղադրութիւններէն: Հե-

տեւեալ խիւսն ալ (հաճաճ) շատ օգտակար է կրնաք գործածել:

Գլօսօֆօն	5 տիրհէմ
Ալիւր	15 »
Պէլլատօն (փոշիացեալ)	1½ »
Մեղր	70 »

Գլօսօֆօնը ալիւրի և պելլատօնի հետ լաւ մը ծծել տալէ ետք՝ սուրճը մէկէն մեղրով շաղէ և գործածէ:

Ամենէն շատ պատահականը անասնոյն ծամելիքի միանունքն են (սինիր) որ ենթակայ կըլլան այս հիւանդութեան, այն տեսն անասունը չէ կարող այլեւս բերանը բանալ, ինչպէս որ գաւառներու մէջ կ'ըսեն՝ անասնոյն ակոսյները կը կղպուին, և չը կրնար բերանը բանալ, ծամելիքները իրար կը կցին կը մնան, այս տեսն շնչառութիւնն ալ դըրժուարանալով յանկարծական մահ կը պատճառէ:

Այս տեսակ պարագայի մէջ հետեւեալ բաղադրութիւնը բերնին և նախաղիին (rectum) մէջ ծորեցնելու է:

1. Ալիւր	15 տիրհէմ
Հաւկիթ	10 հատ
Մուզ (laudanum)	3 տիրհէմ
Կաթ	150 »

Ալիւրը ջրմաջրի մէջ հալեցնելէ ետք, հաւկիթը և մուզը յաւելցնելով գործածէ:

2. Ալիւր	20 տիրհէմ
Հաւկիթ	2 հատ
Թարմ կաթ (տաք)	150 տիրհէմ

Ալիւրը նախապէս ջրմաջրի մէջ հալեցնելէ ետք, կաթը վրան լեցնելով պղնձեցնելէ ետք, հում հաւկիթին վրայ լեցուցէք, և լաւ մը իրար խառնելով գործածեցէք, այս պարագային մէջ ալ չը մոռնաք գլօսօֆօն կամ եթէր շնչեցնել անասնոյն:

Երկրագործ վկայեալ
ՄԵԼՔՈՆ ՍՈՒՔԱՍԵԱՆ

Վերոյիշեալ հիւանդութիւնը Պօլսոյ և գաւառներու մեծ մասին մէջ արեւմտեանում կը ճանչցուի, որ Փռանսերէն «tétanos» ըսուածն է: Մասնաւորապէս ջրիններն ձիւրն և գաւառներն ենթակայ են անոր, մնացեալ ընտանի կենդանիներու խիստ հազուադէպօրէն կը պատահի:

Ընդհանրապէս անդարմանելի է այս հիւանդութիւնը, և 99% համով կը վերջանայ: Ահաւասիկ թէ՛ ի՞նչ կըսէ նաեւ այս մասին Տ. Տաղաւարեան իր Մանրէաբանութեան մէջ..... «Մանրէաբանութեան եկաւ վերջապէս ցոյց տալ թէ՛ «բուն շարժառիթն մանրէ մ'է, որ վիրաւորմանց շուրթիւ մուտք կը գտնէ մամնոյն մէջ և յառաջ կը բերէ այս խանգարումներն: Աւելի սաեպ կը պատահի տաք երկիրներն, չի շարժառիթ մանրէն զարգացման համար բաւական ջերմութիւն կը պահանջէ: Կարկամութեան մանրէն ցուպիկ մ'է 1884ին գրաւուած, որ իր գտնողին անուամբ ներքալիէն մանրէ կ'անուանուի.....

«Կարկամութեան մանրէն առատ է հողի տղմին, տանց փոշիներու և խոտակերաց աղիաց աղբերու մէջ.....

«Ռու և վայառ պատուաստեալ ձիերու աշտան շիճն գործածեցին և հաստատեցին որ սորա ժահրի պատկիւնման աստեղն, անկէ փոքր ինչ առաջ և կամ վերջ ներարկելով միշտ առաջին առնել կը յաջողին: Բայց երբ հիւանդութիւն սկսած է հաւանականութիւնն կը նուազի.....

«Բաւթէօսեան ուսումնարանն կը մատակարարէ կարկամութեան շիճն:

Ինչպէս կը տեսնուի, շճաբուժութիւնը անգամ մինչեւ որոշեալ սահմանի մը մէջ կրնայ հիւանդութեան առաջը առնել: արդ՝ եթէ երբեք այդ հիւանդութեան պատահած ժամանակ անկարող ըլլաք կարկամութեան շիճով դարմանել կենդանին, — թէեւ երբեմն պատահական կիրպով Մեքսիկէ ֆի յանձնարարած դեղերը կրնան ցաւերը մեղմել, բայց ոչ հիւանդութեան առաջը առնել, վասնզի ֆեֆէն աւելի ազդեցիկ փութին, և ալ աւելի ազդեցիկ ըլլալով եղեմն ներարկումներ եղած են կարկամախտէ բռնուած կենդանեաց վրայ: Բայց ամենեւեալ ապարդիւն մնացած են

մեծ մասամբ: Գործածուած է նաեւ Գալաքի բակլա կոչուած հունտի փոշին, (էգէնինը ասոր ալքալօիտն է), բայց միշտ սպասուած արդիւնքը տուած չէ —: Աւելի աղէկ կ'ընէք բնութեան կամքին յանձնել ենթական, և չի չարչարէք կարգ մը դեղերով և դարմաններով: Սահապայ միջոցը քանի մը անգամ անգամ յաջողած է Օսմանեան Կայսերական Ասպատաններու մէջ, կարող անասնաբոյժի մը յանձնարարութիւնով:

Երբ կենդանի մը այդ հիւանդութեան ենթարկի, դրեք զայն իսկոյն մութ տեղ մը, ամեն կարելի աղմուկներէ հեռի: Կոնակը ծածկեցէք, մնուրին (էֆէ+) մէջ գրեք քիչ մը խոտ, բայց ոչ գարի կամ այլ ինչ: Երբեք մի մօտենաք իրէն, և կամ եթէ ստիպեալ քովը ելթալ հարկ ըլլայ, պէտք է ամենայն զգուշութեամբ և առանց աղմուկի մօտենալ:

Ծ. Խմբ.

ՕՂԸ ԵՒ ՄԻՔՐՈՊՈՒՆԵՐԸ

(ժողովրդական դասեր)

Օդը՝ որուն մէջ կ'ապրինք, ամեն ժամանակ մարդոց ուշադրութեան առարկայ մը եղած է: Նա է որ կը գրգռէ և կը պահէ կրակը, ինչպէս և կենդանիներու և բոյստու կեանքը պահելու համար օդին ներկայութիւնը անհրաժեշտ է: Ո՞վ չ'գիտեր որ առանց օդի կեանք չ'կայ, թէ օդ չ'եղած տեղը լապտերը կը մարի, հեւայլն:

Արիստոտել անուանի Յոյն փիլիսոփան որ կ'ապրէր Քրիստոսէ 384 տարի առաջ, իր չորս տարրերէն մին ընտրած էր օդը, այսինքն մին այն չորս ձեւերուն, որոնց տակ ըստ Յոյն փիլիսոփային Նէֆը կարելի էր Գոյութիւն ունենալ (*): Բայց հին փիլիսոփա-

(*) Կրակը, օդը, ջուրը եւ հողը հին գիտնականներէն համար էին ահա ձեւերը, որոց տակ կարելի էր հիւրը գոյութիւն ունենալ: Եւ այս չորս նիւթերու տարբեր տարբեր կապակցութիւնները ծնունդ կուտային բոլոր մարմիններուն:

ները արդէն հազիւ հազ համարձակած են օդի գոյութեան վրայ խօսիլ, քանի որ անոր ո՛չ ծանրութիւնը և ո՛չ ալ զայն կազմող տարրերուն յատկութիւնները գիտէին:

Թողունք սակայն հին ժամանակները, և անցնինք միջին դարու խաւար և մոտաւոր թմրութեան վարդապետութեան, ուր բնագիտութիւնը ստատանայի ծնունդը կոչուած էր, և անով զբաղողները հերետիկոսներ, և ելլինք մինչեւ 16^{րդ} դարն. ուր Լէօնառ ուր Վինսի գրեց հետեւեալ անմահ բառերը. «Կրակը անընդհատ կ'ապառէ օդը, և ոչ մէկ հողային կամ օդային կենդանի կարող է ապրիլ այն օդին մէջ ուր կը մարի կրակը»:

1630 թուականին Ժան Բէյ կը հաստատէ՝ որ օդին մէջ տաքցող մետաղներուն ծանրութիւնը կը չափնայ: Քիչ ժամանակ առաջ արդէն օդին ծանրութիւնը գտնելով՝ անոր գոյութիւնն ալ հաստատեց պարզ փորձով մը: Կշառքի մէջ նժարին վրայ ծորակաւոր (հատակէ) օդադնտակ մը հաւասարակը չռելէ յետոյ, անոր մէջ փութով մը օդ կը ձնչէ. և երբ օդադնտակը կը դնէ կշառքին նոյն նժարին վրայ, կը տեսնայ որ նախկին հաւասարակը չռութիւնը կորուսած է, օդադնտակը աւելի ծանր կը կշռէ քան առաջ: Գրեթէ միեւնոյն ժամանակ Կալիլէյ, Թոռիչէլլի և Բասքալ անուղղակի կերպիւ հաստատեցին շնորհիւ ծանրաչափի օդին ծանրութիւնը, որով և գոյութիւնը:

1667ին Ճօն Մայու անգլիացի բժիշկ մը, շատ մը փորձերով ցցուց թէ օդը իր ամբողջութեամբ չ'հաստատուիր կրացող մետաղներու վրայ, այլ միայն օդէն մաս մը, զոր անուանեց հրային օդ (igno-aerien) կամ կենսական ոգի (esprit vital): Մայու այս չափով չ'գոհացաւ. նա արժանիքն ունեցաւ ըսելու թէ այս հրային օդին պարտինք չընչառութիւնը և այրումը: Այսօր եւս հազարաւոր փորձերէ վերջ Մայուին գաղափարն է տիրողը, քիմիագէտք միմիայն այդ օդին անունը փոխած են, և փոխանակ հրային օդ կոչելու Թեօֆուսթին (oxygène) կ'ըսեն: Դրժրաղաբար գիտունները Մայուի այս սքանչելի գիւտին արժէքը չ'գիտցան. մինչեւ 18^{րդ} դար, գիտունները՝ որոնց գլուխը պէտք է դնել Պէքէռ և Սիւալ, կը կարծէին որ այրող մարմինները իրենց մէջ կը պարունա-

կէին անէրէ-ոյն «ֆէ» մը որ կ'անհետանար մարմինը այրելէն անմիջապէս վերջ:

1774 և 1775ին Շիլ և Բաիէսթուէյ քիմիագէտները առանց կասկածելու՝ Մայուի փորձերը կրկնեցին և անգամ մ'ալ հաստատեցին օդին բաղադրեալ կազ մը ըլլալը:

Բաիէսթուէյ օդով լեցուն ապակեայ ընդունարանի մը մէջ կը դնէ յաջորդաբար կենդանի մուկ մը և վառուած մում մը: Բաւական ժամանակ վերջը կը դիտէ որ յառաջ եկած հասարակած օդին (ածխային թթու) քանակութիւնը փորձի ապակեայ ծածկիչին (ընդունարան) մէջ գտնուող օդի ծաւալին $\frac{1}{5}$ մասը կը ներկայացնէ, և այս հասարակած օդը զոր կը կոչէ անփիզիոլոգիկ օդ (air de-phlogistique), չէ կարող պահել ոչ շնչառութիւնը և ոչ այրումը:

Իսկ 1775ին Լավուազիէ Փռանսացի քիմիաբանութեան հիմնադիրը՝ ոչ միայն յոտան կ'օրէն ցցուց օդին բաղադրեալ կազ մը ըլլալը, այլ բաժանեալ տարրերը միացնելով օդը վերականգնեց:

Լավուազիէ սնդիկի հաղորդ որոշեալ ծաւալ մը օդ 12 օր տաքցուց. փորձի սկիած ժամանակէն երկու օր վերջ տեսաւ որ սնդիկին վրայ կարմիր խաւ մը կազմուած է, որ սնդկային Թեօֆուսթատ (oxyde de mercure) էր, և օդի քանակութիւնը սկսած է նուազիլ. մնացեալ օդին մէջ (12 օր վերջ) այլեւս շնչառութիւնը անկարելի էր, այս օդը կոչեց անկենդան օդ (mofette) կամ բորակալին (Azote) որ փորձի ենթարկած օդի ծաւալին $\frac{3}{6}$ մասը կը ներկայացնէր, որով $\frac{1}{6}$ մասն ալ սնդիկին հետ միանալով սնդկային թթուածնատը կազմած էր: Լավուազիէ այս սնդկային թթուածնատը տաքցնելով կ'ստանայ պարզ սնդիկ և կազ մը որ շնչառութեան և այրման կը ծառայէր, և զոր կոչեց կենսական օդ (air vital) կամ Թեօֆուսթին: Այս կենսական օդը խառնելով անկենդան օդին հետ, յառաջ բերաւ այն հասարակ օդը զոր առած էր փորձի համար:

Փռանսացի գիտուն քիմիագէտը կշռաչափի գործածութեամբ — եւ միմիայն անոր շնորհիւ — հաստատեց որ մարմին մը այրած միջոցին առերեւոյթ ոգի մը դուրս չի տար, ընդհակառակը նոր ոգի մը կը ներմուծէ, և այս ոգին է Թեօֆուսթինը: Նա ցցուց

թէ յիրաւի այրող մարմիններու ծանրութիւնը կը շատնայ. «Երբ փայտ վառենք, կ'ըսէ Լավուազիէ, յառաջ կուգայ ամսային թթու, ջուր և մոխիր. հաւաքեցէք այդ բոլոր տարրերը և կշռեցէք, պիտի տեսնէք որ գումարը աւելի ծանր է քան փայտի կըտորը: Նիւթի կորուստ չ'կայ ուրիշմ, նոյն իսկ ամենափոքրիկ մասնիկի»:

Լավուազիէ շատ մը փորձերէ վերջ սա եզրակացութեան հասաւ թէ «Բնութեան մէջ ոչինչ չ'կորսուիր, ոչինչ չ'վերաստեղծուիր: Կորուստ չ'կայ, այլ միայն կերպարանափոխում և հոգնջեան շարժում»: Այս խօսքերը նոր չէին. հին գիտունները ինչպէս Լիւքրէս կ'ըսէր «Ինչ որ կը կարծուի կորսուած, իրականօրէն չէ. բնութիւնը մարմին մը կը շինէ ուրիշի մը մնացորդներով»: Կը տեսնանք որ Լավուազիէ նորութիւն մը չ'բերաւ, այլ միայն կշռաչափի գործածութեամբ, իր համոզիչ փորձերով, այս խնդրոյն վերջնական և հիմնական լուծում տրուաւ:

Լավուազիէ վերջ շատ մը քիմիագէտներ ի մասնաւորի Կէլիւսաք, Ումպոլ, Տիւմա, Պուսէնկօ, ևւայլն իրենց աշխատութիւններով Լավուազիէի գործը շարունակեցին, և իրենց գիւտերով հարստացուցին քիմիական գիտութիւնը:

Քանի որ հոս տարրաբանութեան դաս մը ընկելու դիտաւորութիւն չ'ունինք, այսչափ ծանօթութեամբ կը գոհանանք, և մէկ խօսքով կ'ըսենք որ՝ օդը կը բաղկանայ գլխաւոր երկու կազերէ (թթուածին և բորակածին): Հարիւր մաս օդին մէջ մօտաւորապէս կը գտնուի 20.8 մաս թթուածին և 79.2 մաս բորակածին:

Հաւանական է ըսողներ գտնուին թէ՛ այս երկու կազերը չ'ունենալով ոչ հոտ, ոչ գոյն, կարելի չէ զանոնք իրարմէ զանազանել. բայց նոյնպէս այս 2 կազերը իրար երէք չեն նմանիր: Թթուածինը եթէ մինակ ըլլար, կեանքերնիս շուտ պիտի սպառէր. իսկ եթէ օդը միայն բորակածինէ կազմուած ըլլար, այն ժամանակ կեանքը անկարելի պիտի ըլլար: Բնութիւնը կարծես այս երկու կազերէն յարմար խառնուրդ մ'է ըրեր բոյսերու և կենդանիներու կեանքը սպահնելու համար, ինչպէս մենք գիտինք կը խառ-

նենք ջուրի հետ մեզ չ'գինովցնելու համար:

Օդը զատ թթուածինէ և բորակածինէ չէ բաղկացած: Գրեթէ միշտ հոն կը գտնանք — յիրաւի շատ փոքր քանակութեամբ — առկոն, ամսային թթու, ջուրի շագի, օզոն (Ozone), բորակածնային թթու, անուշաւոր (AzH), հողային կարծր փոշիներ, միջրոպներ, ևւայլն:

Միջրոպներուն անցնելէ առաջ յարկ կը համարինք մէկ երկու խօսք ըսել միւս նիւթերուն վրայ:

Մ. Կ. ՄԱՍՏԵԱՆ
Վկայեալ Նանսիի Երկրագործ.
Վարժ. և Մոնթէլիէի Գիտ. Համալս.

ՇԵՒԱՄԱԲՈՒՇՈՒԹԻՒՆԸ



ԲԱՍՏԵՕՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

(Շար. 8-ու թիւ 12)

Ձորորդ շրջան. — Բոլոր տրուելիք խնամքները վերիններուն պէս են. շերամատան տաքութիւնը կանոնաւոր ըլլալու է. օդը յաճախ վերանորոգելու է. երբեք գետինը աւելով մի մաքրէք, որպէսզի փոշիները վեր ելլելով թրթուրներուն առողջութիւնը չի վնասեն, այլ ինչպէս ըսինք, միշտ թաց լաթով մը սրբեցէք:

Թրթուրները արթննալէն վերջը տրուած երկրորդ ճաշին անկողինները փոխեցէք: Առաջին ճաշը տալու է ամենէն առաջ մէկ քանի թրթուրներու արթննալէն 24—48 ժամ վերջը. որ թեթեւ ըլլալու է. իսկ երկրորդը քիչ մը աւելի առատ:

Այս տարիքին մէջ թրթուրները աւելի խոշորնալով. անկողինը փոխած տոնանիդ պէտք է հետեւեալ կերպով վարուիլ:

Նոր սեղաններու վրայ ծակոտկէն թուղթերը իրենց երկայնութեամբ շարեցէք, իրարմէ 5 հար. մեթր հեռաւորութիւնով. ուշ մնացածները կամ տկար երեւցածները ուշադրութեամբ վերցուցէք զատ սեղանի մը վրայ դրէք, և կամ բոլորովին նետեցէք. մէկ տուփ հունտի թրթուրներուն համար՝ հիմա 10—12 սեղան պէտք է: Այս

ըջանին մէջ թրթուրները 150 քիւօ մօտ տեքեւ կ'սպառեն :

Իւրաքանչիւր ճաշէն վերջ բոցարձակ կրակ չինեցէք , որչափ օգը խոնաւ ըլլայ , կրակը այնչափ յաճախ չինեցէք : մի մոռնաք գետինը կիրի քլօրուկի ջրով ոռոգելու : եթէ օգը շատ տաք է , երբեմն ալ գետինը և բուծարաններուն շուրջը պարզ ջրով ոռոգեցէք , բայց չ'ըլլայ որ բուծարաններուն տակը ջրէք : որովհետեւ ջուրը չոգինալով , բուծարաններուն մէջ խոնաւութիւնը կը չափոյնէ և թրթուրները կը հիւանդանան :

Կանոնաւորապէս երեք ճաշ տուէք , եթէ կրնաք չորս անգամ : բայց այն ատեն աւելի թեթեւ , այսինքն քիչ : Ըստ կարելոյն անկողինները փոխեցէք երկու անգամ , որուն երկրորդը՝ անոնց արթննալէն վերջը 6^{րդ} օրը պէտք է տեղի ունենայ , և առանց թրթուրները զատելու :

Քնանալու : առաջին նշանին , այսինքն՝ 7—8^{րդ} օրը պէտք է ճաշերը քիչ տրուին , և բոլորովին դադարեցնել , թրթուրներէն մէկ քանիին խորխացում լըրացած տեսնալուդ պէս :

Ուշադրութիւն ըրէք որ շերամատան տաքութիւնը շարունակ կանոնաւոր երթայ , և օգը միշտ վերանորոգուած ըլլայ :

Բոլոր այս հրահանգներուն պէտք է ուշադրութեամբ հետեւիլ մանաւանդ այս տարիքին մէջ . որովհետեւ գիշերուան և ցերեկուան օդի փոխախտմէն , ինչպէս և թրթուրներուն և իրենց անկողնոյն յառաջ բերած խոնաւութենէն յանկարծ փտախտ (flacherie) փ-փ-փ , քիւլլէմէ հաստալըղը կոչուած հիւանդութիւնը կը ծագի մասնաւորապէս այս տարիքին մէջ : Չորրորդ շրջանը 9—10 օրուան մէջ կը լրանայ , և ջերմաչափը պէտք է 23⁰ հարիւրարդ նշանակէ ճաշելու տաքն , և 22⁰ հարիւրարդ ալ հանգստեան և խորխացումի տաքն : Խաւաչափը միշտ 70—80⁰ :

Հիւսկերորդ շրջան . Շերամարոյծը պէտք է հոս բոլոր խնամքը և հսկողութիւնը կըրկնապատկէ : Այս շրջանը՝ շերամին ամենէն վտանգաւոր ժամանակն է , և այս միջոցին է որ թրթուրները ամեն տեսակ հիւանդութիւններէ կը բռնուին եթէ անհոգ գլտնուիք :

Երբ թրթուրները այս շրջանին մէջ

մտնեն , իրենց մորթը կաթով սուրճի գոյն մը կ'ստանայ . երկու անգամ աւելի կը խոչորնան : հետեւաբար պէտք է գտնել , և կէս առ կէս ուրիշ նոր բուծարաններու մէջ դնել , Այս հաշուով ըսել է , 20—24 սեզան պէտք պիտի ըլլայ 25 կռամ հունտի համար :

Եթէ մինչեւ հիմա սովորութիւն ըրած էք որսկան 3 ճաշ տալ թրթուրներուն , գոնէ այս տարիքին մէջ ջանացէք 4 անգամ տալ : Որովհետեւ թրթուրները երկար առէն առնօթի մնալով մէկէն ի մէկ տեքեւներուն վրայ կը նետուին և քիչ ժամանակէն զանոնք լափելով կը հաւոցեն : ուրկէ յառաջ կրնայ գալ անմարսողութիւն , յետոյ յանկարծ մահ կամ աւելի գէշը փտախտ :

Այս շրջանին մէջ , ընդհանրապէս օգը շատ տաք , ծանր և վատառողջ կ'ըլլայ , որով և շարունակ օգի նորոգութիւնն ալ դժուար կ'ըլլայ :

Թրթուրներուն անկողինը՝ տաքութեան ազդեցութեան տակ դիւրութեամբ կը հոտի , և իրմէ ելած անուշադրային կազերը կրնան թրթուրները սպաննել :

Բոլոր միւս տարիքներէն 5 անգամ աւելի տեքեւ կ'սպառէ շերամը իր այս շրջանին մէջ . և որպէսզի այս անգամ քանակութեամբ տեքեւները դիւրութեամբ մարսէ , պէտք է քիչ քիչ բայց յաճախ տալ (4 անգամ) և շերամատան տաքութեան աստիճանն ալ միշտ կանոնաւոր բռնել :

Եթէ շերամատան տաքութեան մասին անուշադիր գտնուիք , յանկարծական փոփոխում մը անմիջապէս մարսողութեան խանգարում յառաջ բերելով , թրթուրին աղիքներուն մէջ խճողուած սնունդը կը բորբոքի , կը խմորի և ծնունդ կուտայ թրթուակ vibron և համրիչաշար մանրահատ խմորիտ ferment կոչուած մանրէներու , որոնք իրենց կարգին յառաջ կը բերեն փտախտ : Երբ կը տեսնէք թէ հարաւային տաք և հեղձուցիչ հոլ մը կը փչէ , և շերամատան բարեխառնութիւնն ալ շատ վեր կ'ելլէ արդէն կրակ վառելու պէտքը չը պիտի դադար , բայց գոցեցէք անմիջապէս հարաւի կողմի օդամուտները , Դիմելու է ուրիշ տան հնարաւոր միջոցներու , որոնցմով կարելի պիտի ըլլայ շերամատան օդի վերանորոգութիւնը : Առանց բուծարաններու տակը ջրե-

լու, չերամտաւան բոլոր մնացած տեղերը յա-
ճախ ջրեցէք, պատուհաններէն վար թրջած
լաթեր կախեցէք, որոնց շոգիացումով կա-
րող ըլլաք տաքութեան աստիճանը իջեցնել:
Ընդհակառակը, եթէ հիւսիսային կամ
հիւսիսարեւմտեան հովեր փչեն, և բարե-
խառնութեան աստիճանը իջնայ, այն ատեն
գոցեցէք բոլոր օդամուտները, և կրակ վա-
ռեցէք:

(Շարունակելի)


Դ. ԲՈՒՍ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Անաստիկ Հանրագիտակ իր առա-
ջին եռամեան կը բոլորէ, ըս կարե-
լոյն իր նպատակին ծառայելով: Շնոր-
հակալութիւն ամեն անոնց՝ որոնք զմեզ
ֆաջալերելէ ետ չի կեցան: Բայց որպէս
զի մասակարարութեան մասին դժուա-
րութիւններու չի բախիմք, կը խնդրուի
մեր Յարգոյ բաժանորդներէն. որ ժամա-
նակին իրենց բաժնեգինն դրկելու մա-
սին անփոյթ չի գտնուին:

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ԱՆՁՆՈՒՑՆԵՐՈՒ ԾԱԼԼՈՒՍԾՔ



Չինական կապուսաւ

Փռեցէք անձեռոցը սեղանին վրայ, վերի
երկու ծայրերը կեղծոնը բերէք, որով ե-
ռանկիւն մը կ'ունենաք, վարի երկու ծայ-
րերէն բռնելով տարէք դէպ ի եռանկիւնը:

գաղաթէն 2 հար. մեթր վար: Դարձուցէք
հիմա անձեռոցը հակառակ կողմը, այսինքն
տակը վրան բերէք, և ձեր կողմը գտնուած
երկու ծայրերէն բռնելով դէպ ի վեր գառ-
ցուցէք, 12 հար. մեթր լայն նոր ծալք մը
կոտրեցէք, ուրիշ վերջը ծալեցէք, մէկ
ծայրէն սկսելով հողմահարի մը պէս:

★ ★

Կտաւներու իւզոտ բիծերը հանելու միջոց

Առէք բեւեկնի իսկութիւն (էսանս
տը թեւ-ռէպանտին) 250 կում
Թորեալ ալքոլ 32 »
Ծծմբական եթեր (էթէր սիւլ-
ֆուրիկ քիմիկ քո-հո-) 32 »
Խառնեցէք ասոնք իրարու: Լեցուցէք չի-
շի մը մէջ և լաւ մը բերանը գոցեցէք:
Երբ գործածել ուզէք, նախ կերպար
դրէք լաթի մը վրայ, որ քանի մը անգամ
ինքն իր վրայ ծալուած ըլլայ, յետոյ շէշը
ցնցելով բացէք բերանը և քանի մը կաթիլ
կերպարին աղտոտած տեղը կաթեցուցէք, և
անմիջապէս ուրիշ լաթի կոտորով մը, որ
պէտք է չոր ըլլայ, չփեցէք մինչեւ որ բիծը
անյայտանայ:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Թիւ 31. — Կ. Վարդիկեան էֆ. Կելէօ-
լուէն. — Կը հարցնէ թէ հաւկիթին թարմը
ինչպէս ճանչնալու է:

Ա. 32. — Հաղարորդակում, հարիւրոր-
դակում, լիդրա եւայլն եւրոպական դրու-
թիւնները (զորս մենք դժուար կը հասկը-
նանք) եթէ թրքական վերածուի լաւ չը-
լալ:

ԿԻՐԱՍՈՐ. — Ա. Սօմունճեան. — Ստա-
ցանք նամակնիդ և 100 դրուշ. շնորհակալու-
թիւն. նոր բաժանորդը արձանագրեցինք և
թերթիւր կը ղրկենք:

ԿԵԼԻՊՈԼՈՒ. — Յովսէփ Վ. Յովսէփեան. —
Ստացանք նամակնիդ, պատասխան ղրկեցինք
նոր բաժանորդի թերթերը ղրկուեցան:

ԼՕՋԱՆ. — Վսեմ. Օհան էֆ. Պաղտատւեան — Ստացանք քառթը, ձեր նոր հասցէին կը ղրկենք թերթերը:

ՄԱՐԱՇ. — Յ. Քէ. Վարժապետեան. — Ստացանք 50 ղրուշ, և տարեկան բաժանորդ նշանակեցինք Մեծ. Նազարէթ էֆ. Պիլէզիկ-ճեանն. շնորհակալութիւն:

ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մ. Չոլաքեան, Ստացանք նամակնիդ, պիտի պատասխանենք ի մօտոյ:

ՊԱՐՏԻՋԱԿ. — Վահան Ճիլունի. — Կը զարմանանք ձեր լռութեան, տակաւին սպասե՞նք ձեր պատասխանին, հաճեցէք գոնէ առ ի քաղաքավարութիւն՝ երկառողի մը ուղարկել:

ԱՅՆԹԱՊ. — Գ. Պողարեան. — Ստացանք 13 թուակիր նամակնիդ, Ա. թիւէն սկսեալ օրինակ մ'ալ կը ղրկենք և 4 օրինակի բաժանորդ կարձանագրենք ձեզ, գիրքերը և նամակ կ'ստանաք, ինչպէս նաեւ ձեր հարցուցած գրքերուն արժէքները կ'իմացնենք ձեզ:

ՁՐՕՍԱՆՔ

Լուծում քիւ և Հանելուկի

Գաւազան

Հողի զաւակդ է Գաւազան
Թէ՛ ի զարդի թէ՛ յենարան
Մարդ խեղդ է որ փորը պատուէ
Գաւազանը, Գաւազան ընէ:

Գլուխը մարմնէն անջատեցի՝
Աւազան մը ձեւացուցի,
Դու ալ վերջի մասէն կտրէ՝
Մէջը աւազանեղաւորէ:

Գալով ծովու զաւակին հիմայ,
Կարծեմ հանելուկդ գտայ:
Նու գիրն թէ որ գամէս գլխին՝
Դէմ առ դէմ ես ք'ը Նաւաղին:

Ս. ԱԼԹՈՒՆՃԵԱՆ

Չոր լուծեցին Տեարք 1. Յ. Շէլէֆեան, 2. Արմէն Չպուքճեան, 3. Ս. Ալթունճեան, 4. Գր. Ֆէրահեան, 5. Իշ-

Դոն Կարապետ Մատթէոսեան, 6. Ա. Գալաթի Յակոբ Պաղպաղեան, 7. Արշակ Խուզարեան, 8. Պետրոս Տ. Ն. Նազիկեան, 9. Ե. Յ. Էլթմէքճեան:

Նուէրը՝ բարեյիշատակ Տր. Փեշաբանճեան փաշայի Պարս. Մարտիկի Պարսի անուն պատկերազարդ գիրքը — որուն գինը 40 ղրուշէն 10 ղրուշի զեղձած ենք. — կը ղրկենք Յովհ. Շէլէֆեան էֆէնտի:

★ ★

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԹԻՒ Ե

Երկայն բարակ բառ մը եմ ես,
Թէ զիս բաժնես՝ ընելով կէս,
Երկու գոյական կը տեսնես,
Գտնես նաեւ բառեր պէս պէս:
Առաջին բառն թէ ձեռք առնես,
Կը հասկնաս մի բառ շատ վէս:
Միւս բառն թէ հարցնես,
Տեսնես շարժում մը իմ կեանքէս:
Ըսեմ քեզ որ պէտք է գտնես,
Թուանշան մը իմ մէջէս,
Որուն վրայ աւելցնես
Մէկ ու այնչափ իմ ամբողջէս
Կարդ մը բառեր գտնել պէտք ես,
Ի գիրութիւն ըսեմ ես քեզ,
Խաղի, ճաշի, տեսակ գտնես:
Թէ ճիշդ լուծես պարզեւ կ'առնես:

Պ. Գ. Չ.

Պատասխանները մինչեւ յառաջիկայ հինգ-չարթի առաւօտ, առաջին անգամ լուծողն պիտի ուսումնայ Սիմոն Գաբամաճեանի «Ընտանիք Հանդէս»ի առաջին տարին, 400 էջէ բաղկացեալ հատոր մը:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Համրագիտակի ուղղուած գիտական արհեստական հարցմանց տրուելիք պատասխաններու մասին մասնագէտներու կարծիքը հանութեամբ կ'ընդունին:

ԱՐՏՈՆԱՏԵՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՆԵԱՆ

ՀԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Մանկական գրքերու ցանկ մը

Մեզմէ խնդրուած է մանկանց ու պատանեկաց կարդալու արժանի գրքերու ցանկ մը, զոր ստորեւ կը հրատարակենք:

Բուրաստան մանկանց Ա. տարի	Ղրգ.
սպառեալ	80
Բուրաստան մանկանց միւս տարիները	
ամեն մէկը	10
Մանկութեան երեւելի արանց. պատկեր.	6
Փոքրիկ տղու մը յուշավէպը	10
Դիւցազունք աշխատութեան	18
Հնտանիք հանդէս Սիմոն Գաբամաճեանէ	10
Խաչի ճառ Ս. Հայրապետէ	5
Մարգարիտ արքայութեան երկնից	7
Մարդ ըլլալու միջոցը	6
Ինքնագնութիւն Սմայլսի	10
Զատիկ Վոլթեր	7
Մօրիս կամ աշխատութիւն	12
Իրական կեանքի նուագներ Մ. Յովհաննէսեան	2
Հնթերցասիրութիւն Զօրայեանի	25

Վիպական գրքեր

Սիրանոյշ Տիկին Տիւսար փաշայի	Ղրգ.
Աղջկան մը սիրտը Օր. Ալիսի	27
Երջանիկ մարդ մը Պերժըրէ թրդ. Գրասէրեան	12
Պ. Լըքօքի ծերութիւնը	2
Զեկ-Զակ կամ Կեռ-փութամատ	20
Ուղեւորութիւն չուրջ զլուսնով	6
Մօնթէ Բրիսթօ կոմս	7
Ամօրի Ա. Տիւմա	60
Ֆեռնանտ	18
Տիկին Մօնսօրօ Ա. Տիւմա (3 հատոր)	10
Մարքիզուհին Ա. Տիւմի	30
	6

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԴՐԱԽՏ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ

ԳՐԵՑ

ՆԵՐՍԷՍ Յ. ՎՐԴ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ոտանաւոր սիրուն գրուածք մը, կ'արժէ որ ամեն անհատ հատ մը գնէ, նա մանաւանդ խորհելով թէ հասցիւթը աղքատաց համար է, որ հեղինակը ազնուաբար կը գնէ անոնց տրամադրութեան տակ. 8⁰ էջ 244 Տպ. Ն. Կ. Պէրպէրեան 1898 գին 10 ղրուշ. — Կը վաճառուի ի մանաւորի խմբագրատանս մէջ:



ՀՈՆԿ-ՔՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈՒԼՍ

Մեծ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

ՆԱՎՐՈՒԵԱՆ ՆԻ ԻՍՏԱՌՈՒԼԵԱՆ

ձեռք ալի խանի դրան կից, թիւ X O

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Ձինական, Հնդկական, Ճապոնի և Սէյլանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ՆԱՎՐՈՒԵԱՆ ՆԻ ԻՍՏԱՌՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ

Նամակագրոյթները գին մը արժեղու համար պարտին:

1. Նամակագրոյթներուն և ոչ սէկ մասը ոչ պատուած և ոչ վնասուած ըլլան ու կարելի եղածին չափ լաւ պահուած:

2. Նամակագրոյթները որքան որ հին տարուան մէջ (բացառութիւններ ալ կայ) գործածուած ըլլան այնքան աւելի կարժեն:

3. Մեզ կամ այլուր զրկելու համար պէտք է քաղջ ջուրի մէջ ձգել, զանոնք և ապա մաքուր լաթի մը վրայ մի առ մի գնել՝ որով կը չորնայ և երբ պահարանի մը մէջ գրուի բօսթի ծախքը կէս առ կէս նուազած կըլլայ: Յաջորդաբար պիտի գրենք բուլբուլն գլխաւոր տեսակներուն և նոցա արժէքներուն վրայ:

Ա Ձ Դ

Հանրապետական կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս.
կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր.
Երկրագործական, Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միջոց պատասխանները կը արուին մասնագէտներու ձեռքով.
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրինութիւն.
Հանրապետական լրագրի

և. Պոլիս, Զարդարեան Դրասուն, Զագմաֆէրլար-Նօգուուր քիւ 50

در علیّه ده جمعیله ده ۵۰ نومرولی زارطاریان کتبخانه سنده (حافظیاتی) مجموعه علوم غریبسی اداره سنده

Հանրապետական պատրաստ է ընդունել ամեն տեսակ ժանուցումներ, ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով. հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն շրջիլ երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը.

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պօղոսեան	ԿԻՐԱՍՈՐ. — Արմենակ էֆ. Սօմունճեան.
ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ստեփան էֆ. Սալիբիչեան	ԿԵՍԱՐԻԱ. — Դեր. Տրդատ Մ. Վ. Պալեան.
ԱՐԱԲԿԻՐ. — Յ. Պ. էֆ. Մանուէլեան.	ՄԱՐԱՇ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ.
ԱԹԵՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան.	Վարժապետեան.
ԳՈՒՐՏ-ՊԵՆԵՆ. — Արժ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան.	ՄԱՐՁՈՒԱՆ. — Յովհաննէս էֆ. Յակոբեան.
ԳԱՀԻՐԵ. — Մ. Պաղտասար էֆ. Ս. Նաթանեան.	ՄՈՒՇ. — Դեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ԷՐՁՈՒՄ. — Տեարք Ինճիճեան Եղարք.	ՊԱՆՏԸՐՄԱ. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան.
ԹԵՀՐԱՆ. — Կարապետ էֆ. Բարսեան.	ՊԱՐՏԻՋԱԿ. — Վահան էֆ. Ճիլունի.
ԻՋՄԻՐ. — Կարապետ էֆ. Մալէճանեան.	ՊՐՈՒՍԱ. — Օննիկ էֆ. Լութֆեան.
ԻՋՄԻՏ. — Աբրահամ էֆ. Կտաւճեան.	ՌՈՏՈՍԹՕ. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.	ՍԱՄՍՕՆ. — Կարապետ էֆ. Սէֆէրեան.
ԽԱՐԲԵՐԴ. — Խաչիկ էֆ. Քէօսէեան.	ՍԸՎԱԶ. — Յ. էֆ. Գարակէօղեան.
	ՏՐԱՊԶՈՐ. — Մահակ էֆ. Էթմէքճեան.

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Դիրք գնել կ'ուզե՞ք, դիմեցե՛ք Զարդարեան Դրասունը. հոն միշտ պիտի գտնե՛ք ամեն ուզածնիդ եւ միշտ զեղչով:

Հանրապետական կը ծախուի ամեն լրագրովաճառաց քով, մասնաւորաբար

Սամաթիա, Կայարանը թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը.
Մագրի-Դիւղ, Պ. Պօղոս Ազնաւորեանի խանութը.
Գատը-Դիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեանի գեղարանը.
Սկիւտար, Պ. Փիլիթօֆճեանի խանութը.
Բերա, Մեծ փողոց Պ. Գառնիկ Կիւլէրեանի խանութը.